ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2023 թվականի N 29-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2023 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:
2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.
   1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի տեսալսողական ծրագրերի թիվը և տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը սահմանելու մասին հարցը:
   2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները հաստատելու մասին հարցը:
   3. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրի՝ 2024 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:

4. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի և դրամական հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին հարցը:
5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

18 դեկտեմբերի, 2023 թվական
ք. Երևան